

1922



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիոյան

«03» 03 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 048 - 25

Նախաձեռնող՝

«Բի էմ սի Պրոջեքթ» ՓԲԸ
քաղաք Երևան, Փափագյան 8

Գործունեությունը՝

Ֆանտանի բազալտի հանքավայրի արդյունահանում
Կոփայրի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 048 - 25

«03» Մարտի 2025թ.

**Կոտայքի մարզի Ֆանտանի բազալտի հանքավայրի արդյունահանման
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություն**

Պատվիրատու՝	«Բի Էմ սի Պրոջեքթ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, Ֆանտան բնակավայր


Ներածական մաս. Ֆանտանի բազալտի հանքավայրը գտնվում է Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Ֆանտան բնակավայրում՝ Ֆանտան գյուղից 1.6 կմ, Չարենցավան համայնքից՝ 5.1 կմ, Ջրաբեր բնակավայրից՝ 5.8 կմ, Հրազդան գետից՝ 8.1 կմ հեռավորության վրա: Բոլոր ենթակառուցվածքներն առկա են, նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Օգտակար հանածոների արդյունահանման համար նախատեսված տարածքի հողերի նպատակային նշանակությունը համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ արոտավայր:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ /ՀՕ-110, 2014թ. / հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի գ ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ: Փորձաքննական գործընթացն իրականացվել է նշված օրենքի դրույթներին համապատասխան:

Նկարագրական մաս. Լեռնագրական տեսակետից Ֆանտանի հանքավայրի տարածքը հարում է Կոտայքի սարավանդին, սահմանափակվում է Գեղամա և Ողջաբերդի լեռնաշղթաներով, հյուսիսում՝ Հատիս և Գութանասար հանգած հրաբուխներով, արևմուտքում՝ Հրազդան գետով:

Օրոգրաֆիկ տեսակետից շրջանը հանդիսանում է տիպիկ լեռնային խիստ կտրտված ռելիեֆով: Ամենաբարձր լեռնագագաթը հանդիսանում է Գութանասար լեռը /2303 մ/ և Կովասար լեռը /2399.1 մ/: Միակ ջրային երակը հանդիսանում է Հրազդան գետն իր ոչ մեծ վտակներով: Վերջիններս հիմնականում սնվում են ձնհալքի ջրերից և աղբյուրներից, որոնք կրում են ոչ մշտական բնույթ:



Շրջանի կլիման մայրցամաքային է: Ամռանն օդի ջերմաստիճանը հասնում է $+35^{\circ}\text{C}$, ձմռանը՝ -30°C -ի: Միջին տարեկան ջերմաստիճանը -5°C է: Տեղումները բավականին հորդառատ են և տարեկան քանակը կազմում է 626 մմ:

Շրջանն ունի երկրաբանական բարդ կառուցվածք: Մակերեսի մեծ մասը ծածկված է հրաբխածին ապարներով և փոքր հատվածները ներկայացված են մետամորֆիկ և նստվածքային ապարներով:

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում բազալտի հաստաշերտի հզորությունը տատանվում է 3.7-34.3 մ սահմաններում, միջինը կազմելով 20.3 մ:

Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են: Բոլոր անցկացված փորվածքներում գրունտային ջրեր չեն հայտնաբերվել: Գրունտային ջրերի բացակայությունը բացատրվում է ապարների ջրաթափանցելիությամբ՝ պայմանավորված զանգվածի ճաքճքվածությամբ, որի հետևանքով մակերևութային ջրերն արագ հեռանում են խորքերը:

Հայցվող տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ, հազվագյուտ, վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Կոտայքի մարզի Ֆանտանի բազալտների հանքավայրի պաշարները 01.01.1968 թվականի դրությամբ հաստատվել են ՀԽՍՀ ՊՏՀ-ի 19.02.1968 թվականի N 163 արձանագրությամբ, ընդհանուր A+B+C₁ կարգերով 5602 հազ.մ³ քանակով, այդ թվում՝ A կարգով – 177 հազ.մ³, B կարգով 1827 հազ.մ³ և C₁ կարգով 3598 հազ.մ³: Պաշարները հաստատվել են որպես շինարարական քարի հումք՝ բլոկի 31.4 % միջին ելքով: Հանքավայրը չի շահագործվել և հաստատված պաշարները 01.01.2024 թվականի դրությամբ մնացել են անփոփոխ:

Օգտակար հանածոյի արդյունահանման ենթակառուցվածքների (բացահանք, արդյունաբերական հրապարակ, աշխատանքային հրապարակ, արտաքին ժամանակավոր լցակույտ, դեպի լցակույտ տանող ճանապարհ) ստեղծման արդյունքում ժամանակավորապես օտարվելու է շուրջ 10.364 հա տարածք, այդ թվում՝ բացահանքի և արտաքին լցակույտի, արտադրական հրապարակի և լցակույտային ճանապարհի համար:


Հանքավայրի մակաբացման առաջացումները ներկայացված են հողաբուսական շերտով և բերվածքային ապարներով: Մակաբացման ապարների հզորությունը տատանվում է 0.0-2.1 մ սահմաններում, միջինը կազմելով 0.63 մ, որից միջինում 0.26 մ հողաբուսական շերտ է (հզորությունը տատանվում է 0.0-0.9 մ սահմաններում):

Բացահանքի օտարման տարածքը կազմում է 9.625 հա, ծառայման ժամկետը՝ 19 տարի:

Հայցվող տարածքի ծայրակետային կոորդինատները ARM WGS – 84 (ARMREF 02) համակարգով հետևյալն են՝

1.Y=8475299.2317 X=4472039.5224	2. Y=8475626.4638 X=4472264.8490
3.Y=8475611.6307 X=4472283.5726	4. Y=8475638.9590 X=4472336.3979
5. Y=8475680.8739 X=4472363.5549	6. Y=8475670.0000 X=4472375.0000
7. Y=8475520.0000 X=4472405.0000	8. Y=8475455.0000 X=4472376.0000
9. Y=8475136.0000 X=4472263.0000	10. Y=8475299.2317 X=4472039.5224

Ելնելով հանքավայրի տեղադրիչ հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից՝ տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Հանքարդյունահանման աշխատանքները կատարվելու են մեխանիկական եղանակով կրկնափուլի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով:



Բացահանքի սահմանները պայմանավորված են հանքավայրի սահմաններում առկա բնության հուշարձաններով, ինչպես նաև բնապահպանական նորմերով:

Հանքավայրից հայցվող տարածքի մշակման համար ընտրվում է ընդլայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգ, մակաբացման ապարների արտաքին ժամանակավոր լցակույտ տեղափոխումով: Աշխատանքային նախագծով նախատեսվում է հանքարդյունահանման աշխատանքները կատարել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով:

Բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

- ամենամեծ երկարությունը – 510 մ,
- ամենամեծ լայնությունը – 275 մ,
- բացահանքի առավելագույն խորությունը – 40.0 մ,
- մակաբացման ապարների միջին հզորությունը – 0.148 մ,
- օգտակար հանածոյի միջին հզորությունը – 21.2 մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները – 2040500 մ³,
- այդ թվում 2-B բլոկից 326200 մ³, 4-C₁ բլոկից 1714300 մ³,
- արդյունահանվող պաշարների քանակը՝ – 1845465 մ³,
- մակաբացման ապարների քանակը (հողաբուսական ապարներ) – 14279 մ³,
- բացահանքի օտարման մակերեսը – 9.625 հա:
- հանքաստիճանի բարձրությունը – 5 մ;
- անվտանգության բերմայի լայնությունը – 2.0 մ;
- աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը – 90°;
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը 20-25 մ:

Բացահանքի շահագործման ժամկետը 19 տարի է, աշխատանքային ռեժիմը շուրջտարյա 260 օր, երկհերթ, հնգօրյա աշխատանքային շաբաթով:

Շահագործման նպատակով բացահանքի բացումը կատարվելու է հանքավայրի արևմտյան մասից անցնող, գոյություն ունեցող գրունտային ավտոճանապարհից մինչև բացահանքի 1930.0 մ բարձրության նիշ ունեցող հորիզոն մոտեցող ճանապարհի անցումով: Բացահանքի բոլոր հորիզոնների բացումն իրականացվելու է տվյալ գրունտային մոտեցող ավտոճանապարհից հորիզոնական կտրող կիսախրամների անցումով: Մոտեցող ավտոճանապարհի երկարությունն է՝ 680 մ, 8-10 մ լայնությամբ: Առավելագույն հաղթահարվող թեքությունը՝ 100 %:

Լեռնակապիտալ աշխատանքներն իրականացվելու են՝

- հանքավայրի արևմտյան մասից անցնող, գոյություն ունեցող գրունտային ավտոճանապարհից մինչև բացահանքի 1930.0 մ բարձրության նիշ ունեցող հորիզոն մոտեցող ճանապարհի անցումով՝ L=680 մ, b=8-10 մ - V= 2240 մ³,

- 1930.0 մ բարձրության նիշ ունեցող հորիզոնից ապարների արդյունահանում V= 6288 մ³, այդ թվում՝ մակաբացման ապարներ (հողաբուսական ապարներ) – 628 մ³, օգտակար հանածո – 5660 մ³,

- արդյունաբերական հրապարակի կառուցում - 450 մ³:

Լեռնակապիտալ աշխատանքների տևողությունը նախատեսված է 0.55 տարի:

Հողաբուսական ապարները, 1900 մ նիշ ունեցող հորիզոնը ներառյալ, 13975 մ³ ծավալով տեղափոխվելու են բացահանքի արևմտյան հատվածում ձևավորվող արտաքին ժամանակավոր լցակույտ՝ 1895 մ հորիզոնի շահագործմանը զուգընթաց իրականացվելու է ներքին լցակույտաառաջացում:

Մակաբացման ապարների տեղափոխումը կատարվելու է KAMAZ-65115 մակնիշի V=10 մ³ տարողությամբ ավտոխաբեարանի միջոցով՝ միջինը 0.5 կմ հեռավորության վրա գտնվող արտաքին ժամանակավոր լցակույտ:

Արտաքին ժամանակավոր լցակույտի մակերեսը կազմելու է 5791 մ², վերին հարթակի նիշը՝ 1906 մ, մակերեսը՝ 5051 մ², շեպի թեքությունը՝ 33-35°, առավելագույն բարձրությունը՝ 11 մ:

Ներքին լցակույտի մակերեսը կազմում է 8.72 հա, միջին բարձրությունը 0.164 մ: Լցակույտառաջացումը կատարվելու է բուլդոզերային եղանակով:

Աշխատանքների ավարտից հետո իրականացվելու է բացահանքի, արտադրական հրապարակի, ճանապարհների լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա: 1895 մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց արտաքին լցակույտից մակաբացման ապարները տեղափոխվելու են ներբացահանքային տարածք և իրականացվելու է մշակված տարածքի ռեկուլտիվացիա:

Մշակված տարածության ռեկուլտիվացված տարածքը կազմում է 8.72 հա: Ռեկուլտիվացիայի է ենթարկվելու նաև արդյունաբերական հրապարակը 0.03 հա: Ընդհանուր մակերեսը կազմում է 8.75 հա:

Խախտված հողատարածքների վերականգնման համար նախատեսված ծախսերը կկազմեն՝ տեխնիկական /1.08 հազ. ՀՀ դրամ/ և կենսաբանական /1295.6 հազ. ՀՀ դրամ/ ռեկուլտիվացիայի իրականացում: Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կկազմի 3288.74 հազ.դրամ:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանալու են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ.

- ընդերքօգտագործման թափոններ /խճի հումք/, որը կազմում է 68600 մ³/տարի,
- ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների, մեխանիզմների շահագործման արդյունքում՝ օգտագործված շարժիչների բանեցված և դիզելային յուղերի մնացորդներ, որոնք հավաքվելու են առանձին մետաղական տարաների մեջ և պայմանագրային հիմունքներով հանձնվելու են յուղեր և քսայուղեր վերամշակող ընկերություններին,
- պինդ կենցաղային թափոնները (կենցաղային աղբ), որոնք կուտակվելու են տարածքում առկա աղբամանների մեջ և տեղափոխվելու են մոտակա աղբահավաք կետեր, և այլն:

Գործունեության իրականացման ընթացքում ջուրն օգտագործվելու է խմելու (272.48 մ³/տարի, միջին օրեկան 1.048 մ³), և տեխնիկական (21.7 հազ./լ) նպատակներով: Տեխնիկական նպատակով ջուրն օգտագործվելու է ճանապարհների, արտադրական հրապարակների 1400 մ² մակերեսով, լցակույտի վրա ակտիվ մասը՝ 2567 մ² և ավտոճանապարհների վրա՝ 1950 մ², ընդամենը 5917 մ²:

Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Կենցաղային կեղտաջրերը՝ 0.89 մ³ օրական քանակությամբ, հավաքվելու են անջրթափանց հորում և պարբերաբար հեռացվելու են:

Հաշվետվությունում ներառված է գրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

Հանքավայրի արդյունահանման աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու լեռնակապիտալ աշխատանքների, արդյունահանման, բեռնման-բեռնաթափման, տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում՝ աղմուկի, օդային ավազան վնասակար նյութերի արտանետումների, ջրային և հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, բուսական և կենդանական աշխարհի, լանդշաֆտի փոփոխության և թափոնների առաջացման հետ:

Բացահանքի շահագործման ընթացքում տրանսպորտի աշխատանքից մթնոլորտ են արտանետվելու փոշի և ծխազանգեր, որոնցից շարժիչներով աշխատող մեքենաներից՝ ազոտի, ածխածնի օքսիդներ և ածխաջրածիններ: Համաձայն ՇՄԱԳ հաշվետվությամբ



ամրագրված մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքների («ԷՌԱ» ծրագիր)՝ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Շահագործման ընթացքում՝ նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացում:

- փոշենստեցման նպատակով ճանապարհների և արտադրական հրապարակի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին՝ օրը 2 անգամ,

- բացահանքի և արտադրական հրապարակի մակերևույթի պարբերական մոնիթորինգ՝ աղտոտիչ նյութերի պարունակությունները վերահսկելու նպատակով,

- լցակայանում պահեստավորված հողաբուսական շերտի մոնիթորինգ:

Նախատեսվում է կենսաբազմազանության պահպանության միջոցառումներ.

- բացահանքի շահագործման աշխատանքներին ներգրավված անձնակազմի ուսուցում՝ իրազեկում շրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ,

- Կառավարության 2014թ.-ի հուլիսի 31-ի N781-Ն որոշման դրույթների իրականացում՝ պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում,

- ընդերքօգտագործման և արտադրական թափոններով աղտոտման կանխարգելում,

- նավթամթերքներ պարունակող թափոնների (յուղոտ լաթեր, բանեցված, դիզելային յուղեր) առանձին հավաքում մակնանշված, ամուր փակվող տարողությունների մեջ: Տարողությունների տեղադրում հատուկ հրապարակներում, ջերմության աղբյուրներից սահմանված հեռավորությունների վրա,

- բանեցված օդաճնշիչ դողերը նախատեսվում է ժամանակավորապես պահել ցանկապատված տարածքում և հետագայում հանձնել վերամշակում իրականացնող լիցենզավորված ընկերության,

- չտեսակավորված կենցաղային աղբը տեղափոխվելու է աղբավայր փակ կողեր ունեցող ինքնաթափով,

- կենցաղային թափոնների տեսակավորում՝ դիտարկելով սննդամթերքների մնացորդների օգտագործումը որպես անասնակեր հարակից բնակավայրերի տնտեսություններում:

Աղմուկի և տատանումների կառավարում.

- բեռնատար մեքենաների տեղաշարժի կազմակերպում նախապես մշակված և համաձայնեցված գրաֆիկով՝ կուտակումները բացառելու նպատակով,

- աղմուկի աղբյուր հանդիսացող մեքենաների շարժիչների կահավորում հատուկ ձայնամեկուսիչ պատյաններով,

- գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,

- աշխատողների առողջության և անվտանգության ապահովում, արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը:

Պատճառաբանական հզորահանգումներ.

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվադրական ակտերին համապատասխան:



Արդյունահանման աշխատանքները կազմակերպելու համար, հիմնականում օգտագործվելու են գոյություն ունեցող ճանապարհները: Հանքավայրի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Փորձաքննության ներկայացված՝ գնահատման արդյունքում վերլուծվել են հնարավոր անցանկալի բնապահպանական ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների և բնակչության առողջության ու սոցիալ-տնտեսական պայմանների վրա, կատարվել է հնարավոր տնտեսական վնասի գնահատում, ինչպես նաև մշակվել է ազդեցության նվազեցման և կանխարգելման հիմնական ուղղությունները:

Հայցվող տարածքում բացակայում է անտառային ծածկույթը, գետային ցանցը, շինարարական կառույցները: Հայցվող տարածքի հարևանությամբ գտնվում է «Լեռնահովիտ քարային կուտակումներ» բնության հուշարձանը /որն անձնագիր չունի/, ինչը դիտարկվել է փորձաքննության գործընթացում և նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն: ՇՄԱԳ-ին կից փաստաթղթերում առկա են «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը:

Փորձաքննության ընթացքում հաշվետվությունը դիտողություններով և առաջարկություններով լրամշակվել է: Փորձաքննության բոլոր փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Ֆանտան բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Նախատեսվող գործունեության համար ներկայումս գործող նորմերով ապահովված է 500 մ սանիտարապաշտպան գոտու ապահովման համար պահանջվող չափը:

Փորձաքննական պահանջներ

1. Պահպանել գնահատման հաշվետվությամբ ամրագրված միջոցառումների և մոնիթորինգի իրականացումը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:
2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն) մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով՝ ներկայացնել լիազոր մարմին:




3. Շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հավաքումը և հեռացումը (այդ թվում վտանգավոր թափոններ՝ յուղեր, քսայուղեր, անվադողեր և այլն) անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Պահպանել նախագծով նախատեսված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները, մասնավորապես բացառել հանքավայրում պայթեցման աշխատանքները:
5. Ապահովել հաշվետվությամբ ամրագրված տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
6. Քանի որ «Լեռնահովիտ քարային կուտակումներ» բնության հուշարձանը գտնվում է նախատեսվող գործունեության տարածքին մոտ, անհրաժեշտ է հանքի տարածքի երկայնքով իրականացնել երկշերտ ծառատունկ:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Բի Էմ սի Պրոջեքթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Ֆանտանի բազալտի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Արմինե Վարդանյան